ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՅԱԴԵԱՆ ՈՐ Ի ԿՐԱՄՆՈԴԱՐ, ՌԴ

Ուրախ ենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունելու եւ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու գնահատանքը բերելու Ձեզ՝ մեր Եկեղեցու ու ժողովրդի արժանաւոր, հաւատաւոր զաւակիդ, որ տարիների անխոնջ ու նուիրեալ աշխատանքով յաջողութիւններ էք արձանագրել Ռուսաստանի Դաշնութեան հասարակական կեանքում՝ վաստակելով արժանաւոր գործարարի բարի համբաւ ու ճանաչում:

Մեծարգոյ պրն. Բայադեան,

Գոհունակութիւն է Հայրապետիս համար անդրադառնալ ու բարձրօրէն գնահատել Ձեր աւանդը Հարաւային Ռուսաստանի Հայոց թեմի կեանքում, որի մասին տեղեակ ենք թեմակալ բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տ. Մովսէս եպիսկոպոս Մովսիսեանի միջոցով: Տիրախնամ թեմի կազմաւորումից ի վեր Դուք աջակից էք մեր եկեղեցականներին եւ Ձեր կարողութիւններն ի սպաս էք բերում ՌԴ հարաւային շրջաններում ապրող մեր ժողովրդի զաւակների ազգային ու եկեղեցական կեանքի առաւել արդիւնաւոր կազմակերպմանը: Ձեր նուիրեալ գործերը եւ անկեղծ սրտից բխած բարեգործութիւնները պատմում ու վկայում են հաւատաւոր հայորդուդ ազգասիրութեան, հայրենասիրութեան ու եկեղեցասիրութեան մասին: Դուք մեծ աջակցութիւն էք բերել ի նպաստ Տիրախնամ թեմի Սբ. Կարապետ, Սբ. Յովհաննէս Մկրտիչ եւ Սբ. Յովհաննէս Աւետարանիչ եկեղեցիների կառուցման ու բարեզարդման, կիրակնօրեայ դպրոցի արդիւնաւոր գործունէութեան, հովանաւորել էք հայ երիտասարդների կրթութիւնը Կրասնոդարի բուհերում, օժանդակութիւն բերել բազմաթիւ խնամատար հաստատութիւնների ու կարիքաւոր ընտանիքների:

Մեծարգոյ պրն. Բայադեան, Ձեր արդիւնաւոր նպաստը Ռուսաստանում հայ կեանքի առաջնութացին ծառայասիրութեան բարի օրինակ է մեր ժողովրդի զաւակների համար: Երիտասարդ հայորդիները պիտի ներշնչուեն Ձեր բարի, ազգասէր ու եկեղեցասէր օրինակելի գործերով՝ շարունակելու ազգին ու Եկեղեցուն օգտակար լինելու պայծառ աւանդները, որոնք դարերով խնամուել ու պահպանուել են մեր ժողովրդի ապրուածասէր հոգում:

Բարձր գնահատելով Ձեր մատուցած ծառայութիւնները մեր Սուրբ Եկեղեցուն ու հաւատաւոր ժողովրդին եւ սիրով ընդառաջելով թեմական բարեջան առաջնորդի խնդրանքին՝ Հայրապետական այսու կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Բարին Աստուած, որ Իր Ամենախնամ Աջի ներքոյ պահպանի Ձեզ եւ Ձեր ընտանիքը եւ պարգեւի նոր յաջողութիւններ Ձեր ջանքերին, ծրագրերին ու բոլոր բարի գործերին:

Թող Ձեր յարկը շնորհընկալ լինի Աստուածպարգեւ բիւր բարիքների եւ երկնային առատ ողորմութեան:

Հաստատո՛ւն եղերուք, անշա՛րժ կացէք, առաւե՛լ լերուք ի գործ Տեառն յամենայն ժամ. Գիտասջի՛ք՝ զի վաստակքն ձեր ո՛չ են ընդունայն առաջի Տեառն (Ա Կորնթ. 15.58):

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 23-ն Հոկտեմբերի
յամի Տեառն 2009 եւ ի թուին հայոց ՌՆԾԸ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 534: